ԳՈՐԾՈՒՂՈՒՄ ԻՏԱԼԻԱ

Հյուսիսային համալսարանի որակի ապահովման վարչության երեք աշխատակիցներ 2014 թ. նոյեմբերի 12-ից 16-ը ՏԵՄՊՈՒՍ «ԳՈՎԵՐՆ» ծրագրի շրջանակում գործուղվեցին Իտալիա: Պալերմոյի համալսարանում Հայաստանից մեկնած այլ բուհերի հետ համալսարանի աշխատակիցները մասնակցեցին վերապատրաստման դասընթացին, որն ուղղված էր ուսումնական գործի կատարելագործմանն ու բուհում ռեգիստրարի ստեղծմանը: Վերապատրաստման ընթացքում ծրագրին մասնակից եվրոպական բուհերի գործընկերները կիսեցին իրենց փորձը:

Պալերմոյի համալսարանի մեր գործընկերները ներկայացրեցին վերջին տարիներին բուհում տեղի ունեցած փոփոխությունները, կառուցվածքի օպտիմալացման գործընթացը: Սպասվող ամենակարևոր արդյունքները այդփոփոխությունից՝ գիտության և կրթության միաձուլումն է, շուկայի պահանջներին համապատասխան կրթության կազմակերպումը:

Խոսվեց նաև կրթության ոլորտի օրենսդրական փոփոխությունների մասին: Բուհում կառավարման որակը բարձրացնելու համար ընթանում է կառավարման գործում ներքին շահակիցներին ներգրավվելու գործընթաց: Ընդգծվեց առաքելության ու նպատակների հստակեցման, արդյունավետ կառավարման գործում բուհերի ղեկավարության դերը:

Սեմինարին մանրամասն տեղեկատվություն տրվեց նաև բուհի էլեկտրոնային կառավարման վերաբերյալ: Ներքին և արտաքին շահակիցներին տեղեկատվություն տրամադրելու համար կարևորվեց բուհի կայքի տեղեկատվությամբ հարստացումը: Նշվեց նաև, որ ունեն դիդակտիկ լաբորատորիաներ սմարթ տեխնոլոգիաներով դասավանդելու համար: Ներկայացվեց ուսանողներին տրամադրվող

ծառայությունները՝ կարիերայի կենտրոնը, ուսանողների սպասարկման կենտրոնը (իրագործվում է դիդակտիկ պլանավորում, դիդակտիկ մոնիթորինգ, on-line քննություն և այլն):

Ամենաարդյունավետ պարապմունքներից էր Գերմանայից Հայնց-Ուլրիխ Շմիդտի նյութը ECTS համակարգի մասին: Կարևորվեց, որ ծրագրի շրջանակում մինչև դեկտեմբերի 12-ը վերանայվեն կարգերն ու քաղաքականությունը: Հայնց-Ուլրիխ Շմիդտը շեշտեց, որ կազմվեն այնպիսի ՄԿԾ-ներ, որոնց վերջարդյունքները հասանելի կլինեն ուսանողների համար: Նշվեց, որ անհրաժեշտ է մշտապես գնահատել (հարցազրույցով, ֆոկուս-խմբերով, քննություններով) ՄԿԾ վերջնարդյունքների ապահովումը: Դա կարևոր է կրեդիտների ճիշտ բաշխման և գնահատման համար: Եթե վերջնարդյունքը չի ապահովվում, անհրաժեշտ է մոդուլը վերանայել:

Մույկիչ Դինոյի պարապմունքը վերաբերում էր որակի ապահովման համակարգին: Բոլոր երկրներում կրթության համակարգերը շատ տարբեր են, այդ պատճառով որակի ապահովման համակարգի մոդելը չի կարող ձևով համաեվրոպական լինել, սակայն դա չի նշանակում, որ չի կարելի ունենալ համադրելի չափանիշներ և չափորոշիչներ, ինչպես նաև կրթության որակի ապահովման միասնական սկզբունքներ: Որակի ապահովման սկզբունքներն են՝ համեմատելիությունը, փոխանցելիությունը, որակի անընդհատ բարձրացումը, հաշվետվողականությունը, թափանցիկությունը: Կարևոր հիմնահարցերից է նաև աշխատաշուկայի դերը այս հարցերում: